



Վահան Թեքեյան

Հոգիդ

Պզտի՛կ աղջիկ, հոգիդ ցուցուցիր դէմքն ինձ այսօր՝
Ջոր ես չէի տակաւին աչքերուդ մէջ կարդացած
Ինչ հաճոյք էր թափանցել յանկարծ մութին մէջ անոր
Եւ գայն գտնել այնքան քաջ, ու վեհագգած, ու գրթած:

Հոգի՛դ, այո՛, աչքերուդ եւ հասակիդ արժանի,
Այնքա՛ն մատաղ ու այնքան արդէն հարուստ ու հասուն,
Գարնանաբոյր քու հոգիդ մարմինիդ մէջ ծաղկատի,
Ջոր շնչեցի հըմայուած՝ ինչպէս հոգին վարդերուն....

Բառով մը դուն ցուցուցիր հոգիդ դէ՛մքը ինձի,
Պզտի՛կ աղջիկ, եւ այդ բառն ես սրտիս մէջ պահեցի
Եւ գայն յիշեմ պիտի միշտ՝ երբ դուն մոռցած ըլլաս զիս . . . :

Գիտե՞ս, թէ ինչ կ'ուզեմ արդ . . . օ՛հ, ո՛չ թէ զիս յիշէիր,
Այլ թէ որքան ալ մեծնաս ու տառապիս ու հրճուիս,
Յիշե՛ս հոգիդ այսօրուան եւ փափկութիւնն եւ ուժն իր:

1912